Վահրամ Լալայան

ՃԱՌԵԼԻ ԵՎ ԱՆՃԱՌԵԼԻ ԱՍՏՎԱԾՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՄԵՋ ԸՍՏ ՀԱԿՈԲ ՆԱԼՅԱՆԻ

Աստվածային ստորոգելիներ, անճառելի որակումներ, խորհրդական Մեգ, ճառելի անուններ, հավատ, հույս, սեր, վերացարկված մտահայեցողական, բարոյագործնական և բարոյաիմացաբանական հոսանքներ

Գրիգոր Նարեկացու «Մատեանը» ըստ էության ոչ միայն ապաշխարության աղոթագիրք է, այլև Աստծո փառաբանության ինքնատիպ մի երկ, որ մեծ հանճարով կերտել է նա՝ ըստ Ճառելի և անճառելի աստվածաբանական եղանակների:

Ա. Աստծո անունների խնդիրը: Գրիգոր Տաթևացու կարծիքով. «Անճառելի է բնութեան եւ էութեանն բան, եւ ճառելի են անուանքն[1]: Համաձայն Դիոնեսիոս Արեոպագեցու տեսության, Աստծո բոլոր անուններն ու (Նրա մասին) տարատեսակ բնորոշումներն առաջացել են նախախնամական ներգործությունների արդյունքում, իսկ Նրա անճառելի, անհաս ու հավիտենական գոյությունը սահմանող «էություն» անվանումը ոչ թե Նրա անիմանալի բնության իսկությունն է հայտնում, այլ՝ ստորոգումը[2]: Այլ խոսքով, եթե Աստծո էությունը անճանաչելի է, ուրեմն անունը ևս անիմանալի է, «զի ոչ գոյ այնպիսի անուն, որ զբնութիւն Աստծոյ յայտնեսցէ»[3]: Ճշմարիտ է նաև այն պնդումը, որ, ըստ էության, *անանուն* է Աստված[4], քանզի Աստծո բոլոր ստորոգելիները «առաջացել են» արարչության հետ կապի արդյունքում. «...անուն անհասութեան...», Բան Իգ (ա-6)[5]: Եւ «է» թվագիրը Աստվածության անընկալելի մշտնջենավորության խորհրդանիշն է ոչ այնքան ըստ թվականի, որքան ըստ էականի նշանակության[6]: Ըստ Տաթևացու «է»-ն ոչ թե Աստծո բնությունն է բացահայտում, այլ նրա անսկիզբ և անվախճան իսկությունը[7]: Աստծո Որդու (կամ Բանն Աստծո) անվանը Նարեկացին Հե «Բան»-ում այսպիսի որակում է տալիս. «Մին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեանց...», Բան Հե (ե-55): Վերջինս, ըստ Նալյանի, նախքան մարդեղության վիճակին է վերաբերում, իսկ «ահաւոր անուն»

---

[1] Գրիգոր Տաթեւացի, «Գիրք Հարցմանց»,- Յաղագս Աստուածաբանութեան Սրբոյն Դիոնէսիոսիե, Երուսաղեմ, 1993, էջ ճգ:

[2] Տե՛ս Յակոբ (պատրիարք) Նալեան. «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապետին», Կ. Պոլիս, 1745 (այսուհետև՝ Նալյան) էջ 255:

[3] Նույն տեղում, էջ 235:

[4] Տե՛ս Գր. Տաթեւացի, նշվ. աշխ., էջ 103:

[5] Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», աշխ. Պ.Մ. Խաչատրյանի և Ա.Ա. Ղազինյանի, Երևան, 1985:

[6] Տե՛ս Նալյան, նույն տեղում, էջ 233:

[7] Տե՛ս Գր. Տաթևացի, նշվ. աշխ. էջ յժա:

է ասվում՝ ըստ Դավթի, թե ահեղ եւ սուրբ է Նրա անունը[1]: Ըստ Պողոս առաքյալի, Աստծո Որդին Իմաստություն և Աստծո զորություն է կոչվում, իսկ ըստ Եսայի (Թ-6)-ի՝ Նրա անունն է՝ Սքանչելի Խորհրդակից, Աստված Հզոր, Իշխան, Հայր հանդերձյալ աշխարհի, և «համապատիւ կցորդութեանց» է ասվում, քանի որ Որդին համապատիվ է էակից անձերին՝ Հորը և Սուրբ Հոգուն[2]: Ծննդ. ԼԲ-29-ում, երբ Հակոբը հարցնում է «մեծ խորհրդի» հրեշտակի անունը, պատասխան չի տրվում, քանի որ անճառելի է և չկա մի անուն, որ Աստծո անհուն էությունն ընդգրկեր, սահմանադասեր ու բացահայտեր[3]. «Անուամբ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելոյդ», Բան Ղ (ե-118): Որդի Աստծո անունը կապված մարդեղության հետ, նաև այսպիսի բնորոշում է ստանում . «Իւղ թափեալ անուն փեսայիդ», Բան ՂԳ (զ-120-121): Ըստ Գրիգոր Լուսավորչի այստեղ. «Ձօծություն Քրիստոսի և զանուն յայտ առնէ»[4] իսկ ըստ Նալյանի մեկնության Սողոմոնի կողմից հեղված անուշ յուղ կոչվեց (հմմտ. «Երգ Երգոց» Ա.-2) Որդի Աստծո մարդանալու խորհուրդը, քանզի Նա Իր աստվածային էությունը մարդկային բնության մեջ անշփոթ և անխառը «պահելով» (մարմնի վրա թափված յուղի օրինակով) շարունակեց մնալ Աստծո անձնավոր Խոսքը՝ Հոր իսկական և բնական պատկերը, որ Իր շնորհները մարդկանց մեջ հեղելով՝ նրանց իրեն է միացնում[5]:

Բ. Աստծո անճառելի էությունը: Աստծո մասին երբեմն ասվում է , թե Մեգ եւ խավար է նրա շուրջը (կամ մտքի համար անհասանելի է), երբեմն թե՝ անմատչելի Լույսով է ծածկված (հմմտ Եզեկ. Ա-28)[6] :

«անմատոյց լուսովդ պարածածկեալ», Բան ԺԸ (դ-43):

Ըստ Դիոնեսիոսի, Մեգը անմատչելի Լույսն է (հմմտ. Ա Տիմ. Զ-16), որտեղ Աստված է բնակվում, որ աներևույթ է՝ գերերևութականության և անտանելի՝ գերպայծառափայլության պատճառով[7]: Իսկ ըստ Նարեկացու՝ Աստված ոչ թե արտաքին վարագույրով է ծածկված, այլ անճառելի հրաշալիքներով ու սքանչելիքներով[8].

«Որ ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ծործոյ
Այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զաւրացեալ »

Բան ԺԸ (դ...) :

---

[1] Տե՛ս Նալյան նույն տեղում, էջ 541:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 255:

[3] Տե՛ս նույն տեղում էջ 660- ոկա:

[4] Ագաթանգեղայ ,Պատմութիւն Հայոց ե,- «Վարդապետութիւն Ս. Գրիգորի», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան 1983, էջ 242:

[5] Տե՛ս Նալյան նույն տեղում, էջ ոձե:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 132, տե՛ս նաև Դիոն. Արեոպագացի «Դորոթէոս պաշտօնեայ սարկաւագին», ,ԳանձասարեԲ Երևան-1992, էջ 149-150:

[7] Տե՛ս Նալյան, նույն տեղում:

[8] Տե՛ս նույն տեղում:

Հին Կտակարանում ոչ մի անգամ չի ասվում, թե որևէ մեկը Հորը տեսել է, և աստվածտեսության «բոլոր դրսևորումները» Աստծո Որդու մարդեղության հետ են առնչվում[1]: Ըստ Նալյանի, աստվածային անձերի սրբության բնույթի մասին ասվում է, որ Հայր Աստծո սրբությունը ծածուկ է կամ ծածկյալ, Որդի Աստծունը՝ չարչարյալ և խաչյալ, իսկ Ս. Հոգի Աստծունը՝ հրեղեն և կիզյալ[2]: Պողոս առաքյալը Հայր Աստծո մասին ասում է, որ ոչ ոք չի տեսել Նրան և ոչ էլ կարող է տեսնել, միաժամանակ կոչելով նրան երանելի, անմահ, անմատչելի Լույսի մեջ բնակվող, արքայից արքա և տերերի տեր (հմմտ. Ա Տիմ. Զ-16)[3].

«Վերամբարձութիւն անձեռնարկելի», Բան ՀԵ (դ-52)

Այսպես ի հայտ է գալիս աստվածճանաչողության ճառելի եւ անճառելի ոլորտների հարաբերության խնդիրը: Աստված Տեր է, թագավոր, Արարիչ, սեր, կյանք, իմաստություն կոչումները ինչքան ճառելի, «նույնքան էլ անճառելի են», քանի որ մարդու սահմանափակ տեսողություն ունեցող միտքը և հոգևոր գիտակցության «խամրող ճառագայթները» ի զորու չեն թափանցել դրական որակումների կամ հաստատական ընկալումների աստվածային տիրույթ.

«Ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն», Բան ՁԳ (բ-44):

Աստված, ըստ էության, լույս է, իմաստություն, սրբություն, սակայն խավար ու Մեգ է Նրա շուրջը[4]: Այլ խոսքով՝ խորհրդական Անգիտության սրբազան Մեգը աստվածհայեցության վերջին հանգրվանն է ու Աստծո հետ միավորման կերպը[5]:

Ավելի ճիշտ՝ անցում է կատարվում դեպի շնորհական աստվածտեսության հարթություն, երբ միտքը «մարում է» ու մնում է հավատը կամ հավատի միեղեն շնորհական տեսությունը[6]: Ամեն դեպքում յուրաքանչյուր աստվածային ստորոգելի իր խորքում թաքնված հավատքի հիմք ունի, թեև մարդ-Աստված հարաբերությունը մատնանշող արտահայտություններով Նարեկացին ուղղակի կամ խորհրդանշաբար հավատքին ևս անդրադառնում է:

Հաշվի առնելով արևելաքրիստոնեական եկեղեցական ավանդույթը և առկա ճգնավորական փորձառությունը՝ ճառելի և անճառելի աստվածճանաչողության ընթացքը հայրերի կողմից դիտարկվում է ըստ խորհրդապաշտական երեք հոսանքների՝ վերացարկված մտահայեցողական, բարոյագործնական և բարոյաիմացաբանական[7]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 541:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 635:

[5] Տե՛ս Վ. Լալայան, Ինը Երանիները հայ խորհրդաբանական ավանդույթի մեջ, «Էջմիածին», 2009, Ժ, Ս. Էջմիածին, էջ 22:

[6] Տե՛ս. նույն տեղում: Տե՛ս նաև Գր. Տաթևացի Նշվ. աշխ. էջ ճժթ:

[7] Տե՛ս Պ. Минин, Главные направления древне-церковной мистики, -"Мистическое богословие", Киев, 1991, էջ 343, 361, 380:

Գ. Ըստ հավատքի մեկնաբանվող ստորոգելիներ: Գրիգոր Տաթևացին հավատքի լուսավորությունը ներկայացնում է որպես Աստծո բանական շնորհի հեղում մարդկային բանական մտքի վրա[1], իսկ հավատի շնորհական տեսությունը սահմանում՝ «պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւն»[2] արտահայտությամբ : Ըստ Գրիգոր Լուսավորչի հավատքի՝ ճշմարտությունը մտքի աչքերի լույսն է[3]: Ըստ մտքի երեք կարողությունների՝ հավատքը սահմանվում է որպես իմացության հավանություն, իսկ ըստ հոգու մասերի «տեղադրվում է» բանական-ի մասում ու պատշաճեցվում Հորը[4]: Այս տեսանկյունից հավատն առանձին վերցրած վերցարկված մտահայեցողական ուղղվածություն ունի, քանի որ մտքի լուսավորություն է:

«Աւանդ արգասաւոր», Բան Հե (դ-51):

Ըստ Նալյանի, Նարեկացին ի նկատի ունի հավատը, քանի որ Ս. Երրորդության հավատը ավանդ է՝ մարդուն տրված, որը միշտ շահութաբեր է, կամ Ս. Երրորդության շնորհը որպես ավանդ բնակվելով անձի մեջ՝ միշտ պտղաբերում է հոգևոր բարիքներով[5]:

Բան ՁԹ – 5-ում Քրիստոսին տրված «**Դարան ամրութեան**» բնորոշումը արդեն իր հիմքում հավատքի առկայության տեղ ունի ըստ Նալյանի բացատրության իմաստի: Նալյանի մեկնության համաձայն՝ Քրիստոս է ամենաապահով (թշնամեաց համար անմատչելի) Լեռը, որտեղ հավատացյալների կուտակած գանձերը (բարի գործեր, առաքինության մեջ հաստատվելու ջանքեր, հանուն արդարության Աստծո սիրո կատարած զոհողություններ և այլն) ոչ մի պարագայում չեն կորչելու և արժեզրկվելու[6], քանի որ Իր տված հավիտենական կյանքի լույսը ոչ ոք չի կարող նրանցից հափշտակել (նաև հավատացյալներն իրենք են Քրիստոսի պատսպարանի գանձերը[7]):

«**Պատսպարան վստահութեան**», Բան ՁԹ-5, արտահայտության մեջ հավատքի պտղաբերության գործոնի ներկայությունն ակնհայտ է՝ ըստ Նալյանի մեկնության, քանզի Քրիստոսի Արյամբ է հավատացյալ անձը մկրտությամբ մաքրվում, Ս. Հոգու շնորհով ապաշխարության ընթացքի մեջ մտնում և վստահություն ստանում Հայր Աստծո, Ս. Հոգու, Եկեղեցու սրբությունների հետ հաղորդակցման և, վերջապես, Երկնքի Արքայություն մտնելու հույս ձեռք բերում[8]: Իսկ այս ամենի հիմքում հավատն է:

---

[1] Տե՛ս Գր. Տաթևացի, Ոսկեփորիկ, աշխարհաբար փոխադրությունը և ծանոթագրությունները Հ. Քյեոսեյանի, Երևան, 1995, էջ 247:

[2] Գր. Տաթևացի, նշվ. աշխ. («Հարցմանց»), էջ ճի:

[3] Տե՛ս Սրբոյն Հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Վենետիկ, 1838, էջ 19:

[4] Տե՛ս Գր. Տաթևացի, Ոսկեփորիկ, էջ 248:

[5] Տե՛ս Նալյան, էջ եճխ: հմմտ. Ս. Եվագր Պոնտացու մտածումի հետ, որ «Արքաիւթիւն Աստծոյ է գիտութիւն սրբոյ Երրորդութեանն՝ ձգեալ ընդ հաստատութեան միտս, և առաւելեալ անապականութեամբ նորա», Հայր Բարսեղ Վ. Սարգիսեան՝ Սրբոյ Հօրն Եվագրի Պոնտացւոյ «Վարք եւ Մատենագրութիւնք», Վենետիկ 1907, էջ 26-գ.:

[6] Տե՛ս նույն տեղում, Նալյան, էջ ոծբ - 652:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 652 - ոծգ:

«**Ապավէն անկասկածելի**», Բան Ղ (ա-7) ստորոգելին առավել ևս իր հիմքում զորավոր հավատ է ենթադրում: Ըստ Նալյանի մեկնության՝ Աստծուն ապավինածները երբեք չեն սասանվում. «անիրաւութենէ փրկեսցես զիս տէր» (2-րդ Թագ., ԻԲ-3)[1]:

Տեսականորեն մարդու փրկության ոլորտին առնչվող ստորոգելիները իրենց մեջ իմաստային շերտից բացի պիտի նաև հույս պարունակեն, որը հավատի և սիրո հետ կազմում է աստվածային կամ շնորհական առաքինությունների եռյակը:

Դ. Հույսը մատնանշող ստորոգելիներ: Գրիգոր Տաթևացին հույսը սահմանում է որպես ստույգ ակնկալություն հանդերձյալ երանության[2]: Մտքի կարողությունների մեջ նա հույսը «կապում է» հիշողության, իսկ հոգու մասերից՝ ցասմնականի հետ[3]: Այլ խոսքով՝ մաքուր հույսը կարելի է «տեղադրել» մտքի և սրտի միջև ու դիտարկել որպես բարոյահիմացաբանական ուղղվածության առաքինություն:

«...**ակնկալություն հավաստի**», Բան ՀԵ (դ-50-51): Ըստ Նալյանի բացատրության, այս ստորոգելին աստվածային հույսի գովասանք է, քանզի հույսն, ըստ Պողոս առաքյալի, երբեք չի ամաչեցնում, եթե Աստծուց է[4]:

«Անհուսության ելք», Բան (ՁԹ-11): Ըստ Նալյանի՝ խոսքը Քրիստոսի մասին է, քանի որ հավիտենական կյանքի հույսը և փրկությունը հավատացյալ մարդու մեջ միայն Նրանով է կենդանի մնում[5]: Եւ ընդհանրապես, բոլոր հավատացյալների բարի հույսը Նա է[6] . **«...զի Դու լոյս ես եւ յոյս»,** Բան ՁԳ (բ-32): Ըստ Գրիգոր Տաթևացու հավատք-հույս-սեր (առաքինությունների) եռյակը հարաբերելի է Ս. Երրորդության անձերին՝ Հորը, Որդուն և Ս. Հոգուն[7]: Այսպես, հույսը պատշաճում է Որդուն**:**

Աստծո Որդին նաև **«յուսոյ տեսութիւն»** է, Բան ՂԵ (ա-4), քանի որ Նրան տեսնելը հուսալին տեսնելն է, կամ Քրիստոս հեռավոր երկնային բարիքները, իր անսուտ խոստման համաձայն, մերձավոր է դարձնում՝ հուսացողին՝ մղելով առաքինության[8]:

Ե. «Սիրո ստորոգելիներ»: Երրորդ աստվածային առաքինությամբ կամ սիրով «շաղախված» ստորոգելիները առանձնապես «նկատելի» են Աստծո փառաբանական որակումներում: Ինչպես նշվեց, Գրիգոր Տաթևացին սերը աղերսում է Ս. Հոգուց, մտքի մասերի մեջ կամքի հոժարությանը, իսկ հոգու զորությունների շարքում՝ ցանկությանը[9]: Ըստ Նալյանի՝ Աստված երեք կերպով է սեր անվանվում՝ նախ ըստ էության (Ս. Երրորդությունը սեր է), բ) անձնավորաբար (Հայրը՝ սեր է, Որդին սեր է, Ս. Հոգին սեր է), գ) տեսականորեն՝ որպես մարդկային

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 654 :

[2] Տես Գր. Տաթևացի «Գիրք հարցմանց» էջ շիգ:

[3] Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, էջ 248:

[4] Տե՛ս նույն տեղում Նալյան, էջ 539:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 653:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 634:

[7] Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, էջ 248:

[8] Տե՛ս նույն տեղում, Նալյան էջ ոհբ:

[9] Տես Գրիգոր Տաթևացի, «Ոսկեփորիկ», էջ 248:

սիրո նախագաղափար, կատարելատիպ և չափանիշ[1]: Սերը որպես աստվածային առաքինություն՝ իր խորհրդական և բարոյական ընկալումներով, անշուշտ բարոյագործնական ուղղվածություն ունի:

«Բաժակ բերկրութեան», Բան Գ (ա-14): Ըստ էության Աստված ինքը բերկրության բաժակ է, քանզի Ս. Հոգու մասին ասվում է որպես անմահարար հեղված բաժակ, որ վերնատանը բերկրանք պատճառեց առաքյալներին[2]:

«Ծածկոյթ ցանկալի», Բան Գ (ա-16) ստորոգելին իր մեջ սեր է ներառում ըստ իմաստի, սակայն Նալյանը հիմնականում ծածկույթն է մեկնաբանում՝ որպես հովանի ժամանակի «փորձության տապի», ըստ առաքյալի խոսքի՝ «զգեցարուք զՏէր մեր Յիսուս Քրիստոս» (Բ Կորնթ., ե-24)[3]:

Աստծո հանդեպ սերը ճգնավորի համար կարող է դառնալ **«վեհագոյն խրախոյս»,** Բան Գ (ե-22), այսինքն՝ հոգեւոր պատերազմի հորդորիչ և ոգեշնչող զորություն[4]:

«Անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր», Բան ԻԳ (ա-9): Համաձայն Նալյանի մեկնության՝ Աստված մերձավոր է մեղքերից հեռու գտնվողների համար, քանի որ, ըստ Պողոս առաքյալի, մեղքն է միայն, որ Աստծուն հեռացնում է մարդուց[5]: Աստված անմատչելի հեռավոր է, քանզի անընկալելի է մարդկային մտքի և անհասանելի բանականության համար: Ըստ ամենազորության Աստված անընդմիջելի մերձավոր է բոլոր արարածներին, քանի որ ամենուրեք ներկա է (հմմտ. Սաղմ. ՃԼԸ 7-8), չնայած նրան, որ աստվածային ոլորտն անդրանցական է արարչության նկատմամբ: Անընդմիջելի մերձավորությունը հատուկ է խորհրդական սիրո բարձրագույն աստիճաններին և ըստ սրբերի հոգեկեցվածքի՝ Աստված, անմատչելի լինելով մարդկային ճանաչողության համար՝ անընդմիջելի մերձավոր է, որովհետև բնակվում է նրանց սրտերում:

Աստծու սիրուն և Աստծուն Նարեկացին այսպիսի որակում է տալիս.

«...անխառն կերպարան սիրոյ», Բան ՀԵ (դ-47): Սա բացարձակ սիրո պարզ ու մաքրագույն արտահայտություն է, որ ակնկալությամբ չի սիրում և ոչ մի սահմանափակություն չի ճանաչում[6]: **«Երանութիւն անձկալի», Բան Ղ (բ -42):** Ըստ Հովհաննես առաքյալի, աշխարհի հանդեպ սերը հակառակ է առ Աստված սիրուն (հմմտ. Ա. Յովհ. բ-16): Այս տեսանկյունից է Նալյանը մեկնաբանում ստորոգելին, քանզի Աստծուն մերձենալու համար զգայական հեշտությունները խոչընդոտ են և զրկում են հավիտենական կյանքից, ըստ այն խոսքի՝ «Ով սիրում է իր անձը՝ կը կորցնի (հմմտ. Յովհ. ԺԲ-25): Ուրեմն, ըստ Նարեկացու՝ շնչավոր կյանքից հրաժարելով է Աստծո երանությունը հասանելի[7]:

---

[1] Տե՛ս Նալյան նշվ. աշխ. էջ 681:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ, 40:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ խա:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս Նալյան, էջ ճծե:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 538:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ ոծէ:

Աստծուն կամ Աստծո փառքը տեսնելը բոլոր ժամանակների ճգնավորների, մարգարեների և արդարների գերագույն տենչանքն էր՝ **«փափագ անձկութեան», Բան** ՂԵ(ա-2): Այսինքն, տենչալի ու ցանկալի բաղձանքների առարկա, որին շատ էր ուզում տեսնել Մովսեսը (ըստ Ելից ԼԳ -22)-ի, քանի որ բոլոր ցանկություններից ու փափագներից վեհագույնը Քրիստոսի (կամ Նրա Փառքի) տեսությունն է[1] :

Մարդացած Աստծո գեղեցկությունը երևաց Քրիստոսի հոգևոր կերպարի մեջ, Նրա անճառելի գեղեցկությունը «բացահայտվեց» պայծառակերպության ժամանակ, արարչության գեղեցկությունն արդեն Աստծո գեղեցկության դրոշմն է կրում: Խորհրդազգածի հոգում Աստծո հանդեպ սիրո կրակը նաև Նրա գեղեցկությունից է բոցավառվում: Այնպես որ Աստծո գեղեցկության հետ կապված արտահայտությունները այս կամ այն չափով կապակցված են առ Աստված սիրուն: Ըստ Տաթևացու՝ անճառ երանությունն ու առաքինությունն է Աստծո գեղեցկությունը, որը նաև մարդկանց փոխանցվեց (մաքրություն, անախտություն, չարից օտարվածություն՝ ըստ Գրիգոր Նյուսացու)[2]: Գեղեցկությունը, անշուշտ, բարոյագործնական ուղղվածություն ունի:

«անվատնելի տեսականութիւն», Բան ՀԵ (դ 48-49): Ըստ Նալյանի մեկնության, Աստծո անեղծանելի գեղեցկությունը երբեք չի սպառվում, թեև բոլոր իմացական էակների հայացքը ուղղված է Նրան[3] :

Առավել ակնհայտ է սիրո եւ խաղաղության կապը[4], քանզի սիրո աղբյուրից է մարդկային հոգին լցվում խաղաղությամբ: Նշվել է արդեն խաղաղության և խաղաղարարության կողմնորոշումը դեպի բարոյաիմացաբանական ուղղություն[5]:

«Առաջնորդ Խաղաղութեան» Բան ՁԳ (ա-8): Թեև շատ են խաղաղարարները, սակայն Աստված է խաղաղարարության առաջնորդը, որ ինչպես բնության մեջ ամեն ինչ միացնելով շաղկապել է, այնպես էլ բարոյապես բոլորին միավորող է ու նույնիսկ թշնամիներին խաղաղեցնող[6]:

Բարությունը Աստծո էությունից է բխում և Քրիստոս ինքը մատնաշեց Աստծո այս որակման բացառիկ լինելը. «Ոչ ոք բարի չէ՛, այլ միայն Աստված (հմմտ. Մարկ. Ժ-18): Արարչությունն ի սկզբանէ բարի էր՝ (ըստ Ծննդոց Ա գլխի): Ըստ Տաթևացու բարին էություն է և ունակություն, իսկ չարը՝ ոչ էություն և բարու պակասություն[7]: Բարին ևս՝ (ինչպես սերը) բարոյագործնական ուղղվածության ստորոգելի է:

Զ. Աստծո բարությունը բացահայտող ստորոգելիներ: Աստծո սերը Նրա բարությունից դժվար է տարանջատել: Թեև Քրիստոսով Աստծո սերն ու բարությունը մարդու համար առավել «շոշափելի» դարձան, սակայն «Բարի Հովվի» սիրո

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 671:

[2] Տե՛ս Գր. Տաթևացի «Գիրք Հարցմանց» էջ միա:

[3] Տե՛ս Նալյան նույն տեղում, էջ շլթ:

[4] Տե՛ս Վ. Լալայան նշվ. հոդվ., էջ 34-35:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 35:

[6] Տե՛ս նույն տեղում, Նալյան էջ ոլգ:

[7] Տե՛ս Գր. Տաթևացի «Գիրք Հարցմանց» էջ 13:

անսահմանությունն ու բարության անընկալելի խորքերը արարածների համար միշտ էլ կմնան առեղծվածային իրականություն:

«Դու՝ իսկութեամբ բարի», Բան ՁԳ (բ-34): Այսինքն, ըստ էության ու գոյության, քանզի միայն Աստված է բնությամբ բարի, իսկ ուրիշները Նրանից բարության մաս ունենալով են բարի կոչվում[1]:

«**Գթութիւն աւրհնաբանելի**», Բան Ղ (ա-3) ստորոգելին Նալյանը մեկնում է ըստ Քրիստոսի կատարած բարի գործերի ու սքանչելագործությունների, քանզի մինչ երկրի վրա էր, գթալով քաղցածներին, և հացն ու ձուկը բազմացնելով՝ հազարների էր կերակրում, հիվանդներ բուժում, կույրերին տեսողություն տալիս, մեռածներին՝ կյանք, աշակերտներին՝ հոգևոր կրթություն[2]:

«բարերարութիւն երկրպագելի», Բան Ղ (ա-4) ստորոգելին ևս աստվածաբանը (Նալյանը) ավետարանական դրվագի հետ է կապակցում, երբ ծովի ալիքները Քրիստոս հանդարտեցրեց, իսկ նավակի մեջ եղողները՝ երկրպագելով Նրան, ասացին. «արդարեւ Որդի Աստծոյ ես Դու» (Մատթ. ԺԴ-33)[3]:

Աստծո բարերարությունը առավելագույն կերպով է դրսևորվում, երբ Նա մեղավորի մեղքերն է ներում: Եւ **«Բարձումն պարտեաց»,** Բան Ղ (ա-9) ստորոգելին այդ տեսանկյունից էլ մեկնվում է՝ ըստ տերունական աղոթքի. «եւ թող մեզ զպարտիս մեր»[4] :

«Բարւոյ բերկրութիւն», Բան ՂԵ (ա-4): Աստված ոչ միայն բարի է ըստ էության («**ինքնաբուն բարի**», Բան Գ (ա-1), այլև մարդու համար բարին հաճելի դարձնող, թեև այն դժվարությամբ է տրվում՝ դժվարաստաց է[5]: Եւ առաքինությունը բերկրանք է պատճառում ստացողին, քանի որ առաքինության բերկրությունը Քրիստոսն Ինքն է՝ ինչպես մեղրի մեջ քաղցրությունը[6].

է. Աստված որպես հոգևոր իմաստության լույսի աղբյուր կամ Արեգակ, որի ճառագայթներից լուսավորվում են բանականները (կամ Աստծո հոգևոր իմաստության և իմացական զորության հետ կապված ստորոգելիներ): Ըստ Գրիգոր Տաթևացու՝ իմաստությունը պատշաճում է Հորը, գիտությունը Որդուն, իսկ հանճարը Հոգու բխմանը (Ս. Հոգուն)[7]: Մտքի կարողությունների մեջ Տաթևացին իմաստությունը իմացության հետ է կապում, գիտությունը՝ հիշողության, իսկ հանճարը՝ դատողության (կամ տրամախոհության)[8]: Նա հանճարը համարում է բնական (շնորհական իմաստություն), գիտությունը՝ ստացական և իմաստությունը՝ աստվածաբանական[9]: Հոգու զորությունների մեջ իմաստությունը բանականի մա-

---

[1] Տե՛ս Նալյան նույն տեղում, էջ 634:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ ոծդ:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 654:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 671:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս Գր. Տաթևացի, «Գիրք Հարցմանց» էջ մի:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 270:

[9] Տե՛ս նույն տեղում:

սում է «տեղադրում», գիտությունը՝ ցասմնականի և հանճարը՝ ցանկականի[1]: Նաև իմաստություն է հավատը, գիտությունը՝ հույսը և հանճարը՝ սերը[2]: Ժամանակի մասերի մեջ Նա հանճարը հանդերձյալ իրողություններին է աղերսում, իմաստությունը՝ ներկայի, իսկ գիտությունը՝ անցյալի[3], հանճարը՝ արտաքին գրքերի, իմաստությունը՝ Ս. գրքի, իսկ գիտությունը՝ նրանց մեկնության[4]: Ըստ Գրիգոր Տաթևացու դիտարկման՝ կատարյալ իմաստություն է իմացության միջոցով հպվել Աստծուն և աստվածայինին (հոգևոր և իմանալի կյանքին), խոկալ Աստծո սերը և ատել զգայական հեշտությունները[5]:

Ստորոգելիների այս խումբը կարող է համալրել ոչ միայն վերացարկված մտահայացողական և բարոյաիմացաբանական, այլև բարոյագործնական ուղղության շարքերը:

«Անշամանդաղ գիտութիւն», Բան Գ (ա-8): Ըստ էության Աստված ինքնագոյ իմաստություն է, քանի որ ինքն ու իմաստությունը չեն զանազանվում[6]:

Ըստ Գրիգոր Տաթևացու, արեգակը (Ս. Երրորդության պատկերի մեջ) խորհրդանշում է Հայր Աստծուն, իսկ նրա դեղին ու սպիտակ ճառագայթները՝ Որդուն և Ս. հոգուն[7]: Եվ ինչպես արեգակի դեղին լույսի ճառագումից ջերմություն է փոխանցվում երկրին, այնպես էլ Քրիստոսով մարդկանց սրտերում բորբոքվեց առ Աստված սերը[8]: Կամ ինչպես արեգակի (սպիտակ) լույսն է լուսավորում գիշերվա խավարում հայտնված երկիրը, այնպես էլ Ս. հոգու շնորհների լույսն է լուսավորում մեղքի խավարում խարխափող մեղավորների հոգիները[9]:

Ս. Երրորդությունն արդեն երեք Լույսի խորհուրդն է կրում.

«Եռալուսեանն զուգակցութեանց», Բան ՀԵ (ե-56): Ըստ Նալյանի՝ սիբիլյան կանխագուշակություններից մեկում ասվում է, որ երեք պայծառ լույս է երևում երկնքում, որոնցից մեկը՝ մարմնով[10]:

«Առանց խավարի ճառագայթ», Բան ՁԹ-7: Ըստ Պողոս առաքյալի՝ Քրիստոսն է Հոր Փառքի ճառագայթը (հմմտ Եբր. Ա-3), որի մեջ ամեն ոք փրկվելով խավարից, լուսավորվում է, և Նրանից բարձր ոչինչ չկա, որ ստվեր ձգի իր փառքի վրա[11].

«Անմատչելի հպաւոր», (Բան ՁԹ-10): Ստորոգելին աստվածաբանը մեկնում է ըստ Քրիստոսի իմացության զորության, երբ Նա (իր առաքելության ժամանակ)

---

[1] Տե՛ս նույն տեղում էջ մի:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 270:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում էջ 269:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

[7] Տե՛ս Գր. Տաթևացի, «Գիրք Հարցմանց» էջ 124:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 125:

[9] Տե՛ս նույն տեղում:

[10] Տե՛ս Նալյան էջ, 541: Սա իր գեղանկարչական (մանրանկարչական) արտահայտությունն է գտնում «Պայծառակերպության» դրվագում, հստակ դրսևորված եռալուսյան պայծառության մեջ:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ, ոծգ:

բոլորին ճանաչում էր, նրանց սրտի խորհուրդները գիտեր, մտքերը «կարդում էր» մնալով իր Աստվածությամբ եւ աստվածամարդկային բնությամբ անմատչելի բոլորին ու լուծելով (անիրագործելի) մարդու փրկագործության խնդիրը, որին անկարող էր հպվել հրեից օրենքն ու հունաց իմաստասիրությունը[1]:

Քրիստոս նաեւ **«Ճառագայթ աւրինեալ»** է Բան Ղե (ա-1), քանզի Օրհնեալ Արեգակ՝ Հորից ծագեց այս ճառագայթը, որ չի այրում ու սևացնում, այլ զովացնում ու լուսավորում է[2]: Նույն կերպ է մեկնաբանվում **«Լուսոյ կերպարան»,** Բան Ղե (ա-2) ստորոգելին: Այսինքն, Լույս Հոր էութենական և բնական պատկեր ու կերպարանք, որի կատարելությունն ու առատաբաշխությունը հենց իր անձով է բացահայտվում[3]:

«Գոյարան մտաց», Բան ՁԳ (ա-3), այսինքն՝ ոչ միայն արարչության, այլև անմարմին մտքերի և խորհուրդների գոյացուցիչ է Աստված[4] :

Ը. Աստծո կամքը սահմանող որակումներ: Աստծո կամքը ըստ հոգու զորությունների մարդու «ներսում» այն է, որ «արդարություն» հաստատվի մարդկային հոգեկառույցում՝ բանականը լինի խոհական (խորհրդածի Աստծո պատվիրանների իրագործման մասին, ցասմնականը՝ արիական, իսկ ցանկականը՝ ողջախոհական, որպեսզի մարմինը ենթարկվի հոգուն, իսկ հոգին՝ Աստծուն (Ս. Հոգուն) և արդյունքում անձը հաստատվի աստվածային սիրո տիրույթում[5]: Ըստ Նեղոս Սինայեցու (հավանաբար Եվագր Պոնտացու) «Աղոթքի մասին» խրատների, Աստծո կամքը աղոթարարի բնության մեղսազերծումն ու նրա հոգու մեջ սրբության հաստատումն է[6]

«անսասանելի ուղղութիւն», Բան Հե (դ-47): Ըստ Նալյանի՝ ի նկատի ունի Աստծո կամքը, որ երբեք չի սխալվում և ճշմարտությունից չի խոտորվում[7]:

«Կրթարան կամաց», Բան Ղ (ա-12): Աստված ոչ միայն մտքի, այլև կամքի կրթիչ է, քանզի միտքը վարժապետները ևս կարող են կրթել, սակայն «մարդու մեջ» բարի կամք միայն Աստված կարող է հաստատել[8]:

«Կամք անփոխադրելի», Բան Ղ (բ-45), որը չի հոգնում մեղքեր քավելուց[9]:

«Մերձաւոր կամարար», Բան Ղ (ա-7): Իրենից երկյուղածների կամքը Աստված է հաստատում, և մարդու մեջ պտղաբեր բարի կամքն արդեն Ս. Հոգուց է[10]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ, 653:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ, ոհա - 671:

[4] հմմտ. նույն տեղում, էջ, ոլբ:

[5] Տե՛ս «Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին», նախաբանը՝ Յ. Քեոսեանի, աշխարհաբար փոխադրությունը Ս. Ստամբոլցեանի, Երևան 1992, էջ 24-25:

[6] Տե՛ս Նեղոս Սինայեցի, «Աղօթքի մասին», «Գանձասար», Ա. Երևան, 1992, էջ 183:

[7] Տե՛ս Նալյան, նույն տեղում, էջ 538:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 655:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ ոծէ:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 654:

Թ. Աստծո արդարությունը ներկայացնող ստորոգելիներ: Արդեն մանրազնին քննության է ենթարկվել արդարության (որպես խորհրդական առաքինության) համապարփակ բնույթը և հիմնավորվել նրա բարոյահիմացաբանական կողմնորոշումը[1]:

«խոստումն անստելի», բան ՀԵ (դ-51): Ըստ Նալյանի՝ Աստված արդարությամբ խոստանում է և ճշմարտությամբ կատարում իր խոստումները[2]: Իսկ Աստծո արդարությունը (ըստ եկեղեցու վարդապետների) երեք կերպ է դրսևորվում՝ նախ ըստ արժանի հատուցման (բարյաց՝ բարի և չարյաց՝ չար), երկրորդ՝ մարդեղության խոստումը կատարելով, և երրորդ՝ մեղավորներին արդարացնելով[3]:

Քրիստոսն «**Արեգակն արդար**», Բան ՂԵ (ա-1) է կոչվում, քանի որ թե՛ ստորիններին, թե՛ վերիններին առատապես շնորհ է տալիս, թեև նրանք ըստ իրենց ընդունակության են այն յուրացնում[4]: Այսինքն, ոչ միայն հրեշտակներին է լուսավորում, այլ նաև «դեպի ներքև» ծագելով՝ լուսավորում է մարդկային ազգը[5]: Ըստ Գր. Տաթևացու՝ Քրիստոս արդարության արեգակ է կոչվում («Եւ ծագեսցէ ձեզ երկիւղացած անուան իմոյ արեգակն արդարութեան» Մաղաք. Դ-2)[6], քանի որ ամենքին հավասարությամբ բաշխում է նյութական բարիքները, իսկ արժանավորներին հավատ և հոգևոր շնորհներ տալով (այստեղ)՝ հանդերձյալում անվախճան փառքի է արժանացնում[7]:

Ժ. Աստված- արարչություն կապը արտացոլող ստորոգելիներ:

«Անպարագիր, անվայրափակ տեղի ամենեցուն», Բան ԻԳ (ա-2): Ըստ Նալյանի մեկնության՝ Աստված ամեն ինչ իր մեջ է պարփակում ոչ թե մարմնավոր ընկալման դիտանկյունից՝ (ինչպես Մայր երկիրը), այլ կյանքի հոգևոր իմաստավորման, քանզի իր շնորհներով սրբերի մեջ է բնակվում, իսկ նրանք՝ Աստծո, թեև (նրանք) ողջ կյանքում անհանգիստ են, մինչեւ Աստծո մեջ չհանգչեն[8]:

«Բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին», Բան ԻԳ (ա-3): Աստված նաև ամեն տեղ է իր էությամբ, զորությամբ ու ներգործությամբ, բայց ոչ՝ շնորհներով[9]:

Մյուռոնի միջոցով Ս. Հոգու շնորհները պարուրելով ողջ մարդկային բնությունը, պտղաբերում են և՛ սրտի ոլորտում, և՛ մտքի՝ պատճառ դառնալով ներքին համապարփակ վերափոխության (գոնէ սրբերի պարագայում):

ԺԱ. Մյուռոնի խորհրդական բնույթին աղերսված ստորոգելիներ:

---

[1] Տե՛ս Վ. Լալայան, նշվ. հոդվ., էջ 28-30:

[2] Տե՛ս Նալյան, էջ 539:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ ոհա:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս Գր. Տաթևացի, «Գիրք Հարցմանց», էջ 125:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ ճիէ:

[8] Տե՛ս Նալյան, էջ ճծդ:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 154:

«Պատկեր պանծալի», Բան ՂԳ (դ-60): Մյուռոնը Աստծո Որդու պատկերն է, քանզի ինչպես Քրիստոսն է Աստվածությունը (որը պարզ է ու միակ) և մարդկությունը (որ բարդ է՝ կազմված մարմնից, հոգուց և մտքից) միավորում, այնպես էլ մյուռոնն է՝ բաղկացած ձիթենու պարզ յուղից և ծաղիկների բարդ խառնուրդից[1]:

«Զաւրութիւն անձանց», Բան ՂԳ (ժը- 415): Ինչպես ձեթի յուղով մարմինն է զորանում ու զվարթանում, այնպես էլ հոգեշունչ մյուռոնի յուղով մարդկային հոգին է զորանում Աստծո պատվիրանների պահպանության գործում[2]:

«Բռնախոյեան դիւաց», Բան ՂԳ (ժը-417): Այսինքն հզոր ախոյան ու դիմադրող, քանզի մարդու քաղաք-բնության հինգ դռները կնքվում ու ամրացվում են այս մյուռոնի յուղով, որպեսզի չարը մուտք չունենա[3]:

Մյուռոնով կնքվածները պարուրվելով Ս.Հոգով, ճառագայթում են իրենց երեսի շնորհներով, այս կերպ, **«Ճառագայթ շնորհաց»,** Բան ՂԳ (ժը-411), ստորոգելին կարելի է վերագրել ոչ միայն Ս. Հոգուն (որից բխում են ճառագայթները), այլև մյուռոնին, որ փոխանցում է շնորհները[4]:

«Մերկացուցիչ գաղտնեաց», Բան ՂԳ (ժը-419-420): Ս.Հոգին քննելով աստվածային խորախորհուրդ գաղտնիքները, մյուռոնի միջնորդությամբ այն հասանելի է դարձնում կնքվածին[5]:

«Ըստ խտրութեանն հոմերոնի», Բան ՂԳ (ժթ-432) (ըստ Պողոս Խաչատրյանի՝ բանաստեղծորեն-փոխաբերաբար[6]): Ըստ Նալյանի Նարեկացին Մյուռոն բառը թարգմանում է ինձ մայր, քանի որ այս յուղը իբրև մայր վերստին ծնելով մարդուն՝ նրան բարոյապես դեպի իրեն է կողմնորոշում[7]:

«Մառնամուտ», Բան ՂԳ (ժթ-437): Խորին, մթին, մռայլ է սրբալույս մյուռոնի խորհուրդը[8]:

«Այս իւղ զդրաւշեալն քառակուսեան յանուն քո... », Բան ՂԳ (իա-473): Ըստ Նալյանի մեկնության՝ պատրաստված խաչերը միայն մյուռոնով օծվելուց հետո են «հաւասարազօր» դառնում Քրիստոսի խաչին ու երկրպագելի՝ ոչ ըստ նյութի կամ ձևի, այլ՝ նրա վրա գամված Քրիստոսի, որից էլ շնորհ է բխեցնում մյուռոնը՝ ինչպես Քրիստոսի Արյունից[9]: Այսինքն մյուռոնով հեղված Ս. Հոգու շնորհները Քրիստոսի Արյան նման ներգործում են՝ զորություն տալով դևեր հալածելու, ցավեր

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ ո. ձ. ա-681: Տե՛ս նաև «Սրբալույս Մյուռոն», Ս. Էջմիածին 2001, էջ 119:

[2] Տե՛ս Նալեան, էջ ողթ:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ էճ:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ ողը:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ էճա:

[6] Տե՛ս Գր. Նարեկացի «Մատեան Ողբերգութեան», էջ 1120 (ՂԳ- «Բան» -ի 77–րդ ծանոթագրությունը):

[7] Տե՛ս Նալյան, նույն տեղում, էջ էճգ:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 703:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 705:

փարատելու, խորհուրդներ կնքելու, քանի որ առանց խաչի նշանի և խաչակնքման ոչ մի եկեղեցական խորհուրդ չի կատարվում[1]:

«Փայտ անուանի իւղոյ աւրհնութեան...», Բան ՂԳ (իա-476): Մյուռոնը ձիթենու յուղից է և ծաղիկներից, որով օծվում են խաչերը ու հոգևոր զորություն ստանում[2]:

«Հրաշափառ խորհրդոյ պատկեր», Բան ՂԳ (իգ-504): Ինչպես յուղը ոմանց հետ միավորվում է, իսկ որոշներից «բարձր կանգնում» (ջրից ու գինուց), այնպես էլ մյուռոնի յուղը՝ խոնարհներին միավորվում է, իսկ հպարտներին՝ լքում[3]:

«Ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ», Բան ՂԳ (իդ-519): Նա ձևով չի սահմանվում,(Ս. Հոգին-Վ.Լ.) թեպետ Հորդանանում աղավնակերպ երևաց, իսկ Վերնատանը՝ հրեղեն լեզվով, և Նրա շնորհը, ըստ Քրիստոսի մարմնի օրինակի (որ մեծ ու փոքր նշխարների մեջ ամբողջությամբ պարունակվում է)[4] մի կաթիլի մեջ, թե մի շշի՝ միեւնույն չափով է բաշխվում[5]:

Մյուռոնի կնիքը պայծառացնում է հավատացյալի հոգևոր տեսողությունը՝ դառնալով «**լուսաւորութիւն աչաց**», Բան ՂԳ (ժը -412): Ըստ Նալյանի՝ «մտաց»[6], քանզի միտքն է հոգու աչքը[7]: Այս իմաստով Նարեկացին մյուռոնին տալիս է նաև. **«գտիչ աղանդից»,** ՂԳ (ժը-417) որակումը, քանի որ Ս. Հոգու շնորհը նրա միջոցով լուսավորելով մարդուն՝ հայտնում է կրոնական հոսանքի աղանդ լինելը[8]: Աստվածտեսության դիտանկյունից խորհրդական Արեգակի կամ Աստծո ճառագայթների զորությունից կուրանում են մարդկային հոգու աչքերը, և Աստված մնում է անհասանելի՝ Անգիտության Մեգի մեջ: Այսպես խորհրդական իրականության մեջ լույսի և խավարի սահմանը դառնում է անորոշ:

Եւ մյուռոնին տրված **«Խաւար անզնին»** Բան ՂԳ (ժթ-447) ստորոգելին արդեն իր մեջ է ներառում և՛ Ս. Հոգու շնորհների լույսը, և՛ այդ լույսի ընկալման «խավարը»: Քանզի ինչպես Աստծո էությունը իր անըմռնելիության պատճառով անմերձենալի Մեգ է, այնպես էլ յուղը՝ իբրև Ս. Հոգու շնորհական զորության կրիչ, մարդկային մտքի համար անգննելի խավար է[9]:

Մյուռոնի մեջ սերը խորհրդանշող ծաղիկը (կամ ծաղկաբույրը) նարդոսն է, քանզի Քրիստոս **«Նարդոս ընտիր»,** Բան ՂԳ (ժա-253) կոչվեց բոցավառ սիրո և «առաքինության խիտ տերևներ» ունենալու պատճառով[10]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 706:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ էճը:

[4] Այս միտքը համերաշխ է Սահակ Միայնակյացի աստվածաբանական այն մտածումին, որ՝ «թէպէտ աւր ըստ աւրէ առնուն քահանայքն հացն ու գինին անապական պատարագի, եւ ոչ յավելու ի Քրիստոս» (Յ.Քէոսեան. «Սահակ Միայնակեացի աստուածաբանական երկը» էջմիածին-2010-ժ, էջ 97):

[5] Տե՛ս Նալյան, էջ էճթ:

[6] Նույն տեղում, էջ 698:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ էճ:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 704:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 690-զղա:

Խորդապաշտության վերացարկված մտահայեցողական ուղղության մեջ կարելի է ներառել՝ ա. ըստ հավատքի մեկնաբանված ստորոգելիներից երկուսը, քանի որ Նալյանի մեկնությունը վերաբերում է միայն հավատին՝ («ապավեն անկասկածելի») և երկակի շեշտադրությամբ գերակայություն տալիս ճանաչողությանը («դարան ամրութեան»): բ. Աստծո իմաստության և իմացական զորության հետ կապված ստորոգելիներից չորսը («անշամանդաղ գիտութիւն», «անմատչելի հպաւոր», «գոյարան մտաց», «եռալուսեանն զուգակցութեանց»), գ. Աստծո կամքը սահմանող ստորոգելիներից երկուսը («անսասանելի ուղղություն», «կամք անփոխադրելի»)[1], դ. Աստվածարարչություն կապն արտացոլող ստորոգելիներից մեկը՝ («բոլոր իսկութեամբ յուպ յամենեսին»), ե. մյուռոնի խորհրդական բնույթին աղերսված ստորոգելիներից վեցը («բռնախոյեան դիւաց», «մերկացուցիչ գաղտնեաց» «մառնամուտ», «ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ», «գտիչ աղանդից», «խաւար անգնին») զ. (անճառելի)՝ «անուն անհասութեան», «անմատույց լուսովդ պարածածկեալ», «վերամբարձութիւն անձեռնարկելի» (և ճառելի)՝ «մին բարձրեալ ահաւոր անուն», «համապատիւ կցորդութեանց», «իւղ թափեալ անուն փեսայիդ», որակումները:

Բարոյագործնական ուղղվածություն ունեն ա. «սիրո» յոթ ստորոգելիները («բաժակ բերկրութեան», «ծածկոյթ ցանկալի», «վեհագոյն խրախոյս», «երանութիւն անձկալի», «փափագ անձկութեան», «անխառն կերպարան սիրոյ», «անմատչելի հեռաւոր և անընդմիջելի մերձաւոր»), բ. Աստծո բարությունը «բացահայտող» հինգ անվանակոչումները, գ. Որդի Աստծո կատարելությունն ու հոգևոր զորությունը ներկայացնող չորս որակումները («ճառագայթ աւրհնեալ», «լուսոյ կերպարան», «առանց խաւարի ճառագայթ», «արեգակն արդար» («արդարության» ստորոգելիներից), դ. աստվածային կամքը սահմանող արտահայտություններից մեկը («մերձաւոր կամարար»), ե. մյուռոնի խորհրդական բնույթին աղերսված չորս բնորոշումները («պատկեր պանծալի», «ճառագայթ շնորհաց», «հրաշափառ խորհրդոյ պատկեր», «նարդոս ընտիր»):

Միստիկայի բարոյահմացաբանական ուղղությանն են հարում[2] ներկայացված մյուս ստորոգելիները՝ ա. «հավատք»-ից՝ («Աւանդ արգասաւոր», «պատսպարան վստահութեան»), բ. «հույս»-ի չորս ստոգելիները, գ. «կամք»-ից՝ «կրթարան կամաց»-ը, դ. «արդարություն»-ից՝ («խոստումն անստելի»), ե. Աստված-արարչություն «կապ»-ից՝ («անպարագիր, անվայրափակ տեղի ամենեցուն»), զ. «մյուռոն»-ից՝ («զօրութիւն անձանց», «ըստ խտրութեանն հոմերոնի», «այս իւղ զդրաւշեալն քառակուսեան յանուն քո», «փայտ անուանի իւղոյ աւրհնութեան», «լուսաւորութիւն աչաց»), է. «խաղաղություն»-ից «առաջնորդ խաղաղութեան»-ը, ը. «գեղեցկություն»-ից՝ «անվատնելի տեսականութիւն»-ը (Աստծո գեղեցկության հետ կապված այս ստորոգելին բարոյահմացաբանական հոսանքի մեջ է ներկայացվում՝ հաշվի առնելով Նալյանի մեկնությունը, հակառակ նրան, որ «գեղեցիկը» բարոյագործնական ուղղվածություն ունի):

---

[1] Այս ստորոգելին նաև բարոյահմացաբանական կողմնորոշում ունի՝ ըստ Նալյանի մեկնության:

[2] Որևէ հոսանքի պատկանելության խնդրում որպես հիմնավորում կամ պատճառաբանություն է հանդես գալիս աստվածային կոչման ուղղվածությունը և Նալյանի մեկնության շեշտադրությունը - Վ.Լ.:

Վահրամ Լալայան, Ճառելի և անճառելի աստվածճանաչողությունը Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մեջ ըստ Հակոբ Նալյանի – Ճառելի աստվածաբանությունը Աստծո մասին որոշ գիտելիքներ է հաղորդում, թե «ինչ է Նա», անճառելի աստվածաբանությունը բացասման եղանակով սահմանում է արդեն, թե Նա «ինչ չէ» և Աստծո անանուն լինելու իրողությունը: Նալյանի կողմից մեկնաբանված սառը մտահայեցողական շեշտադրության ստորոգելիները, բնականաբար, հարում են խորհրդապաշտության վերացարկված մտահայեցողական հոսանքին, իսկ հոգու առաքինության լույսից և խորհրդական սիրո կրակից ճառագող որակումները՝ բարոյագործնական ուղղությանը: Միստիկայի բարոյահմացաբանական հոսանքին մերձ են մեծամասամբ (երկակի մեկնողական ուղղվածության) կամ միանգամից երկու ուղղությամբ մեկնված ստորոգելիները:

Ваграм Лалаян, Позитивные и негативные пути богопознания в «Книге скорбных песнопений» Григора Нарекаци, в комментариях патриарха Акопа Наляна – Позитивное богословие передает некоторое познание о Боге, о том «что Он есть», негативное богословие отрицательным способом определяет уже «что Он не есть» и факт безымянности Бога. Истолкованные Наляном предикаты холодного умозрительного акцентирования естественно примыкают к абстрактно-спекулятивному направлению мистики, а названия, излучаемые светом добродетели души и пламенем мистической любви – к нравственно-практическому направлению. К этико-гностическому направлению близки в большинстве случаев предикаты направления двоякого истолкования или предикаты, истолкованные сразу в двух направлениях.

Vahram Lalayan, Positive and negative ways of Theo- Gnosis in the *Book of Lamentation* by Grigor Narekatsi as seen in the interpretation of Patriarch Hakob Nalian – The way of positive theology is giving some knowledge about God, about ‘what He is’, negative theology determines by negations ‘what He is not’ and the fact of God’s namelessness. Predicates of cool speculative accentuation, interpreted by Nalian, naturally join the abstract-speculative tendency of mysticism, while appellations emanating from the soul virtue and the fire of mystic love join the moral-practical tendency. Predicates of the tendency interpreted in two ways or the predicates interpreted in both ways at the same time are mostly close to the ethic-gnostic tendency.

Վահրամ Լալայան – ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի նախկին ասպիրանտ